ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

22 մարտի 2024 թվականի թիվ 28-Ա

ք.Երևան

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ԹԻՎ 19-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության կողմից 2024 թվականի փետրվարի 22-ին Հանձնաժողով մուտքագրված վարչական բողոքը, ***պարզեց.***

«ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ դիստրիբյուտոր կամ Ընկերություն) վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի ««ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության տեսալսողական ծրագրերի ծանուցումները մասնակի հաստատելու մասին» թիվ 19-Ա որոշման (այսուհետ՝ վարչական ակտ) մի մասի դեմ:

Հանձնաժողով ***ներկայացված վարչական բողոքում դիստրիբյուտորը նշել է հետևյալը՝***

2024 թվականի հունվարի 29-ին և փետրվարի 2-ին Ընկերությունը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատմանն է ներկայացրել «Россия-К», «Россия-24» և «Romance Channel», «Suspense» տեսալսողական ծրագրերի վերաբերյալ ծանուցումներ: Ծանուցումներին կից ներկայացվել են տեսալսողական ծրագրերի օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթերի պատճենները: Հանձնաժողովի կողմից ծանուցումները վարչական ակտով հաստատվել են մասնակի, մերժվել են «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի մասով ծանուցումները: Վարչական ակտում նշված ծրագրերի ծանուցումը մերժելու հիմք է նշվել 29.01.2024թ. ծանուցմամբ ներկայացված 27.05.2021թ. կնքված N 1497/3000 պայմանագիրը թերի լինելու հանգամանքը:

Ըստ Դիստրիբյուտորի՝ իր և «Համառուսական պետական հեռուստառադիոհեռարձակման ընկերություն» դաշնային պետական ունիտար ձեռնարկության մասնաճյուղի «Սովտելեէքսպորտ» ներտնտեսական միավորման (ФИЛИАЛ ФЕДЕРАЛЬНОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИТАРНОГО ПРЕДПРИЯТИЯ «ВГТРК» «ВНЕШНЕЭКОНОМИЧЕСКОЕ ОБЪЕДИНЕНИЕ «СОВТЕЛЕЭКСПОРТ»), (այսուհետ՝ Իրավատեր) միջև 2021 թվականի մայիսի 27-ին կնքվել է № 1497/3000 պայմանագիրը, համաձայն որի՝ Դիստրիբյուտորը ձեռք է բերել «Россия-К» և «Россия-24» տեսալսողական ծրագրերի օգտագործման թույլտվության իրավունքը: Ըստ պայմանագրի՝ «Россия-К»

տեսալսողական ծրագրի օգտագործման իրավունքը տրամադրվել է ՀՀ տարածքի, բացառությամբ Երևան քաղաքի, իսկ «Россия-24» տեսալսողական ծրագրի օգտագործման իրավունքը՝ ՀՀ տարածքի համար:

Դիստրիբյուտորի կողմից նշվել է, որ վարչական ակտը ոչ իրավաչափ է, ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանություններով.

«1. ***Հանձնաժողովը մերժել է ծանուցման հաստատումը պայմանագիրը թերի լինելու հիմքով՝***

Համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» ՀՀ օրենքի 54-րդ հոդվածի՝

1. Տեսալսողական *ծրագրերի դիստրիբյուտորը գործում է օրենսդրության համաձայն կարգավորող պետական մարմին ծանուցում ներկայացնելուց հետո:*

2. Յուրաքանչյուր նոր տեսալսողական ծրագրի վերաբերյալ ներկայացվում է ծանուցում:

3. Ծանուցումը ներառում է՝

1) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի վերաբերյալ.

2) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ.

3) տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը.

4) տեղեկություններ Հեռարձակողների և օպերատորի հիմնադիր կամ մասնակից հանդիսանալու վերաբերյալ:

4. Կարգավորող պետական մարմինը ծանուցումը հաստատում է 20-օրյա ժամկետում:

5. Ծանուցման մեջ թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված տեղեկություններ լինելու կամ օտարերկրյա տեսալսողական ծրագրերում գովազդ ներառված լինելու դեպքում այն չի հաստատվում, բացառությամբ այն դեպքերի, երբ հնարավոր չի եղել ձեռք բերել տվյալ տեսալսողական ծրագրի առանց գովազդի տարբերակը:

(...) Նշված իրավական նորմից ակնհայտ է, որ ծանուցումը պետք է ներառի մի շարք տեղեկություններ և տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքած պայմանագրի պատճենը: Օրենսդիրը նաև սահմանել է այն սպառիչ հիմքերը, որոնց դեպքում Հանձնաժողովի կողմից չի հաստատվում ծանուցումը:

(...) Այսպիսով, վերոգրյալ առաջին հիմքից հետևում է, որ ծանուցումը չպետք է հաստատվի, եթե այն պարունակում է թերի, ակնհայտ կեղծ կամ խեղաթյուրված ***<u>տեղեկություններ</u>****:*

(...) <u>Այսինքն ստացվում է, որ թերի, ակնհայտ կեղծ, խեղաթյուրված պետք է լինեն այն տեղեկությունները, որոնք օրենսդիրը պարտադիր է համարել ծանուցման մեջ ներառելու համար:</u>

(...) Հանձնաժողովի վարչական ակտում նշված պատճառաբանությունը համադրելով Օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ ծանուցման չհաստատման հիմքերի հետ, ակնհայտ է դառնում, որ Հանձնաժողովն իրավասու չէր չհաստատելու ծանուցումը, նույնիսկ եթե պայմանագիրն եղել է թերի:

(...) Այսպիսով, վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ Հանձնաժողովը մերժել է Ընկերության ներկայացրած ծանուցման հաստատումը այնպիսի հիմքով, որպիսի նախատեսված չէ Օրենքի 54-րդ հոդվածի 5-րդ մասով:

2. ***Հանձնաժողովը վարչական ակտով պատճառաբանել է, որ Պայմանագրով չի հիմնավորվել այն փաստը, որ Ընկերությունը «Россия-К» և «Россия-24» տեսալսողական ծրագրերն այլ անձանց տալու (վերավաճառելու) իրավունք ունի:***

Հանձնաժողովը Ընկերության ծանուցման մերժման հիմքում դրել է այն հանգամանքը, որ Պայմանագրով չի հիմնավորվել այն փաստը, որ Ընկերությունը «Россия-К» և «Россия-

24» տեսալսողական ծրագրերն այլ անձանց տալու (վերավաճառելու) իրավունք ունի: Մասնավորապես, Հանձնաժողովը վարչական ակտով պատճառաբանել է, «Պայմանագրի առարկա» բաժնում նշված տեղեկատվության համաձայն՝ «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի ոչ բացառիկ օգտագործման թույլտվության իրավունքը տրամադրվել է Դիստրիբյուտորին կաբելային հեռարձակում (վերահաղորդում) իրականացնելու համար: «Պայմանագրի առարկա» բաժնից չի երևում, որ նշված տեսալսողական ծրագրերի օգտագործման իրավունքն այլ անձանց տրամադրելու (վերավաճառելու) իրավունք է տրված Դիստրիբյուտորին: Եվ քանի որ պայմանագրում որոշ հատվածներ փակված են, մասնավորապես, «կողմերի իրավունքներ և պարտականություններ» բաժինը, ուստի չի հիմնավորվում այն փաստը, որ Դիստրիբյուտորը վերոնշյալ տեսալսողական ծրագրերն այլ անձանց տալու (վերավաճառելու) իրավունք ունի:

Հանձնաժողովի հիշյալ պատճառաբանությունից հետևում է, որ Ընկերության կողմից ներկայացված պայմանագրի առարկայով Հանձնաժողովի համար չի հաստատվել Ընկերության՝ հիշատակված տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր լինելու փաստը, ընդ որում ըստ Հանձնաժողովի՝ «կողմերի իրավունքներ և պարտականություններ» բաժինը փակված լինելու պատճառով վերջինս չի կարողացել հաստատել տվյալ փաստը:

(...) <u>Այսինքն, Հանձնաժողովի նշված պատճառաբանությունը ճիշտ չէ</u>:

Ավելին, համաձայն թիվ 1497/3000 պայմանագրի 1.1.9 կետի՝

Օպերատոր– Տարածքի օրենսդրությանը համաձայն գրանցված իրավաբանական անձ, որը Լիցենզատուի կողմից պայմանագրով սահմանված պայմաններով, իրավասու է օգտագործելու Ծրագրերը և/կամ Ծրագիրը դրանք (այն) ՀՀ տարածքում հեռարձակման տեխնոլոգիաների օգտագործմամբ բաժանորդներին հաղորդելու միջոցով:

Նույն պայմանագրի 3.1.14 կետի համաձայն՝ <u>Լիցենզառուն պարտավորվում է ապահովել Ծրագրերի տարածումը Օպերատորների հեռահաղորդակցման ցանցերով անհրաժեշտ ենթալիցենզային պայմանագրերի կնքման միջոցով:</u>

(...) Նշված պայմանագրային դրույթը համադրելով հիշատակված իրավական նորմերի հետ՝ հետևում է, որ Պայմանագրով Ընկերությանը իրավունք է վերապահվել տարածելու տեսալսողական ծրագրերը օպերատորների միջոցով ենթալիցենզային պայմանագրեր կնքելու միջոցով:

(...) Այսպիսով, համադրելով հիշատակված պայմանագրի 1.1.9 և 3.1.14 կետերը Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հետ, ակնհայտ է դառնում, որ «Վի Էմ Տելեպրոջեքթ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է «Россия-К» և «Россия-24» տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր, քանի որ պայմանագրով ստանձնել է պարտավորություն նշված տեսալսողական ծրագրերը տարածել օպերատորների հեռահաղորդակցության ցանցերով համապատասխան պայմանագրերի կնքման միջոցով»:

Հանձնաժողով ներկայացված վարչական բողոքով Դիստրիբյուտորը խնդրել է վերացնել Հանձնաժողովի 19.02.2024թ. թիվ 19-Ա որոշումը (մի մասը) և կայացնել նոր որոշում՝ հաստատելով Դիստրիբյուտորի 2024 թվականի հունվարի 29-ի ծանուցումը՝ Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի վերաբերյալ:

Բողոքին կից ներկայացվել է ФИЛИАЛ ФЕДЕРАЛЬНОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИТАРНОГО ПРЕДПРИЯТИЯ «ВГТРК» ընկերության 21.02.2024թ. թիվ 27/2200/11 գրության պատճենը: Ինչպես նաև ներկայացվել է Հանձնաժողովին 29.01.2024թ. ներկայացված ծանուցմանը կցված պայմանագիրը նույն ձևով, ինչը և կցվել էր տվյալ ծանուցմանը:

2024 թվականի մարտի 06-ին Հանձնաժողով հասցեագրված գրությամբ Դիստրիբյուտորը ներկայացրել է նաև 27.05.2021թ. կնքված թիվ 1497/3000 պայմանագրի՝

28.02.2024 թվականին կնքված թիվ 6 համաձայնագրի պատճենը և խնդրել այն համարել վարչական բողոքի ներկայացված փաստաթուղթ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական բողոքի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված լրացուցիչ ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

- 2024 թվականի հունվարի 29-ին Դիստրիբյուտորի կողմից ներկայացվել է «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի մասին Օրենքով պահանջվող ծանուցումը, սակայն 27.05.2021թ.-ին կնքված պայմանագիրը ամբողջական չի ներկայացվել՝ պայմանագրի որոշ հատվածներ փակված են եղել: Պայմանագիրն ամբողջական ներկայացնելու վերաբերյալ Դիստրիբյուտորին կրկին տեղեկացվել է Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 5-ի և 13-ի գրություններով:
- Դիստրիբյուտորը նշել է, որ պայմանագրի այն հատվածները, որոնք վերաբերում են պայմանագրի կողմերի ֆինանսական հարաբերություններին, վերաբերելի չեն Հանձնաժողովի գործառույթներին և չեն կարող ազդել ծանուցումը հաստատելու կամ մերժելու որոշման վրա, փակված են, ինչը չի կարող համարվել փաստաթղթի ամբողջականության խախտում: Դիստրիբյուտորը նշել է նաև, որ ծանուցմանը կից ներկայացված պայմանագրի այն դրույթները, որոնք փակված են, պարունակում են առևտրային գաղտնիք:
- Օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասով տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտորի համար պարտավորություն է սահմանված ծանուցման մեջ նշել ծրագրերի վերաբերյալ Օրենքով պահանջվող տեղեկությունները, ինչպես նաև ծանուցմանը կից ներկայացնել տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը, ավելին, օրենսդիրն այստեղ որևէ բացառություններ չի սահմանել, հետևաբար պայմանագիրն ամբողջական է իր մեջ ներառված ամբողջ նյութով, հավելվածներով, ինչը Դիստրիբյուտորի կողմից 2024 թվականի հունվարի 29-ի ծանուցմանը կից ներկայացված 27.05.2021թ.-ի թիվ 1497/3000 պայմանագրի դեպքում չի պահպանվել:
- Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշմամբ մերժվել է «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության ծանուցման հաստատումը «Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի մասով՝ հիմք ընդունելով Դիստրիբյուտորի կողմից 29.01.2024թ.-ի ծանուցմամբ ներկայացված 27.05.2021թ. № 1497/3000 պայմանագիրը թերի լինելու հանգամանքը:
- Դիստրիբյուտորը 2024 թվականի փետրվարի 22-ին վարչական բողոք է ներկայացրել Հանձնաժողով՝ Հանձնաժողովի 19.02.2024թ. թիվ 19-Ա որոշումը (մի մասը) վերացնելու և կայացնելու նոր որոշում՝ հաստատելով Դիստրիբյուտորի 2024 թվականի հունվարի 29-ի ծանուցումը Россия-К», «Россия-24» տեսալսողական ծրագրերի վերաբերյալ:
- 2024 թվականի մարտի 06-ին Հանձնաժողով հասցեագրված գրությամբ Դիստրիբյուտորը ներկայացրել է նաև 27.05.2021թ. կնքված թիվ 1497/3000 պայմանագրի՝ 28.02.2024 թվականին կնքված թիվ 6 համաձայնագրի պատճենը և խնդրել այն համարել վարչական բողոքի ներկայացված փաստաթուղթ: Համաձայն համաձայնագրի 1-ին մասին ՝ թիվ 1497/3000 պայմանագրի 2.1.1. կետը շարադրվել է հետևյալ բովանդակությամբ.

«2.1.1. Պայմանագրով տրամադրված տեսալսողական ծրագրերից օգտագործման իրավունքը ներառում է ենթալիցենզավորման պայմանագիր կնքելու իրավունքը օպերատորների հետ՝ պայմանագրային այլ պայմանները հաշվի առնելով»:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասով, 2024 թվականի փետրվարի 22-ին դիստրիբյուտորի կողմից բերված վարչական բողոքն ընդունել է վարույթ:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են Դիստրիբյուտորի կողմից ներկայացրած փաստերը, որոնք համադրվել են Հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշման ընդունմանն ուղղված փաստաթղթերին և փաստերին, և պարզվել է, որ դիստրիբյուտորը ներկայացրել է տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը՝ խախտելով Օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետի պահանջը:

Անդրադառնալով վարչական բողոքում բերված այն փաստին, որ Հանձնաժողովը չի իրականացրել վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրության օրենսդրական պահանջը, ապա Հանձնաժողովը ևս մեկ անգամ արձանագրում է, որ դրանք հիմնավոր չեն, քանի որ Օրենքով դիստրիբյուտորի համար պարտավորություն է սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքում գործել Հանձնաժողով ծանուցում ներկայացնելուց հետո միայն, իսկ ծանուցումը ներառում է հետևյալը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Ծանուցումը ներառում է՝

1) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի վերաբերյալ.

2) տեղեկություններ տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձի վերաբերյալ.

3) տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը.

4) տեղեկություններ Հեռարձակողների և օպերատորի հիմնադիր կամ մասնակից հանդիսանալու վերաբերյալ»:

Տվյալ դեպքերում դիստրիբյուտորը չի կատարել Օրենքի պահանջը և չի ներկայացրել տեսալսողական ծրագրի իրավատիրոջ հետ կնքված պայմանագրի պատճենը:

Դիստրիբյուտորի կողմից 2024 թվականի փետրվարի 22-ին վարչական ակտի դեմ բերված վարչական բողոքով կրկին ներկայացվել են դեռևս վարույթի շրջանակներում ներկայացված հիմնավորումները, և Հանձնաժողովի կողմից վարչական բողոքի հիման վրա կրկին ուսումնասիրվել են ներկայացված փաստերը, փաստաթղթերը, և Հանձնաժողովը ևս մեկ անգամ արձանագրում է, որ 29.01.2024թ.-ի ծանուցմամբ ներկայացված պայմանագիրը թերի է, թերի է նաև վարչական բողոքով ներկայացված պայմանագիրը, և դիստրիբյուտորի բացատրությունները, ինչպես նաև ФИЛИАЛ ФЕДЕРАЛЬНОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИТАРНОГО ПРЕДПРИЯТИЯ «ВГТРК» ընկերության 21.02.2024թ. թիվ 27/2200/11 գրության պատճենը ներկայացնելը հիմնավոր և բավարար հիմք չեն ներկայացված վարչական բողոքը բավարարելու: Ավելին, օրենսդիրը դիստրիբյուտորների գործունեության իրավական գործելու նպատակով սահմանել է Հանձնաժողովին պայմանագիր ներկայացնելու պարտադիր պահանջ: Իսկ տվյալ դեպքում Հանձնաժողովը՝ որպես այդ իրավահարաբերությունների հաստատման միակ լիազոր մարմին, այդ փաստաթղթերին պետք է տիրապետի ամբողջական, որպեսզի ծանուցման հաստատումից հետո ծագած իրավահարաբերությունների ժամանակ ևս իր լիազորությունները կարողանա իրականացնել լիարժեք:

Ավելին, Ընկերությունը Հանձնաժողովի կողմից 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշումն ընդունելուց հետո նոր համաձայնագիր է կնքել նույն այն պայմանագրի հետ կապված, որը Հանձնաժողով է ներկայացրել թերի: Այդ համաձայնագրի հիմնական փոփոխությունն այն է, որ ավելացվել է մի կետ նախկինում կնքված պայմանագրում, որով Ընկերությանը իրավունք է տրվել ցանցային օպերատորներին վերավաճառել տեսալսողական ծրագրերը: Սակայն Հանձնաժողով վարչական բողոքին կից կցված պայմանագիրը ևս Ընկերությունը ներկայացրել է թերի, այն է՝ պայմանագրի էական պայմաններից որոշները կրկին փակված են (նշենք ավելին՝ Պայմանագրի 1-ին էջը ավարտվում է ավարտուն նախադասությամբ, մինչդեռ երկրորդ էջը սկսվում է այլ նախադասության կեսից), և Հանձնաժողովի համար պարզ չէ Ընկերությանը տրամադրված իրավունքների ողջ ծավալը, ինչպես նաև Ընկերության ներկայացրած համաձայնագրի դրույթները այդ պայմանագրի մյուս կետերի հետ համադրելու բարդություններ են առաջանում: Այս համատեքստում նշենք, որ ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության դեպքում Հանձնաժողովը պահպանում է տեղեկատվության տնօրինման գաղտնիության իրավունքը, ինչի մասին բազմիցս տեղեկացվել է Դիստրիբյուտորին:

Փաստորեն, Ընկերության կողմից սույն վարչական բողոքի շրջանակում ներկայացված ապացույցներով չի հիմնավորվում, որ վարչական ակտը ոչ իրավաչափ է, այլ ընդհակառակը՝ վարչական ակտի ընդունումից հետո Ընկերության գործողությունները հիմնավորում են այն, որ կարիք է եղել լրացուցիչ համաձայնագրով պայմանագրի դրույթներ փոփոխել:

Ցանկանում ենք անդրադառնալ Ընկերության այն փաստարկին նաև, որ վերջինիս կողմից փակվել են պայմանագրի այն կետերը, որոնք գաղտնի տեղեկատվություն են ներկայացնում և Հանձնաժողովին ծանուցման հաստատման ժամանակ անհրաժեշտ չեն: Առաջինի մասով Ընկերությունը չի ներկայացրել որևէ ապացույց այն մասին, որ գաղտնի նյութեր են առկա այդ պայմանագրում, ավելին, այդպիսիք առկա լինելու դեպքում Հանձնաժողովը իրավասու է գաղտնի փաստաթղթերի հետ աշխատել, և անգամ եթե փաստաթղթերում նշված են տեղեկություններ, որոնք գաղտնիք են պարունակում կամ սահմանափակ տարածման տեղեկություն են և ենթակա չեն երրորդ անձանց տրամադրման, Դիստրիբյուտորի կողմից կարող էր այդ մասին տեղեկացվել Հանձնաժողովին:

Իսկ ինչ վերաբերում է Դիստրիբյուտորի կողմից բերված այն փաստարկին, որ համադրելով հիշատակված պայմանագրի 1.1.9 և 3.1.14 կետերը Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի հետ, ակնհայտ է դառնում, որ «Վի Էմ Տելեպրոջեքթ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է «Россия-К» և «Россия-24» տեսալսողական ծրագրերի դիստրիբյուտոր, քանի որ պայմանագրով ստանձնել է պարտավորություն նշված տեսալսողական ծրագրերը տարածել օպերատորների հեռահաղորդակցության ցանցերով համապատասխան պայմանագրերի կնքման միջոցով, ապա արձանագրենք ևս մեկ անգամ, որ Պայմանագրի նշված կետերով նշված է, թե Դիստրիբյուտորը իրավունք ունի ապահովելու տեսալսողական ծրագրերի տարածումը հեռահաղորդակցության ցանցերով, այլ ոչ թե, ինչպես պնդում է Դիստրիբյուտորը, տրված է այդ տեսալսողական ծրագրերի օգտագործելու իրավունքը՝ ներառելով օպերատորի հետ ենթալիցենզավորման պայմանագիր կնքելու իրավունքը:

Հանձնաժողովը՝ որպես վարչական մարմին, վարչարարությունն իրականացրել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված կարգով և ապահովել է փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակցի օգտին առկա հանգամանքները («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի

37-րդ հոդված), և Հանձնաժողովի կողմից իրականացվել է իրավաչափ վարչարարություն, իսկ ընդունված վարչական ակտն ընդունվել է Օրենքի դրույթների պահանջների պահպանմամբ և իրավաչափ է:

Այսպիսով, վարչական բողոքի նյութերի ուսումնասիրության և համադրման արդյունքում, առաջնորդվելով ինչպես գործում առկա փաստերով, Հանձնաժողովն ամրագրում է, որ Հանձնաժողովը՝ որպես տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող պետական մարմին, Օրենքով վերապահված իր վերահսկողական լիազորություններն իրականացրել է իրավաչափ, իսկ դիստրիբյուտորի կողմից վարչական բողոքի շրջանակում լրացուցիչ ապացույցները և փաստերը բավարար չեն:

Այսպիսով, Հանձնաժողովի կողմից Օրենքով իրականացված վարչարարության արդյունքում 2022 թվականի փետրվարի 19-ին ընդունված թիվ 19-Ա վարչական ակտն իրավաչափ է և օրենքով սահմանված պահանջներին համապատասխան է ընդունվել, նշում է պարունակում այն բոլոր փաստական և իրավաբանական հանգամանքների վերաբերյալ, որոնք Հանձնաժողովին հիմք են տվել ընդունելու համապատասխան որոշումը:

Հետևաբար, Հանձնաժողովի կողմից ընդունված իրավաչափ վարչական ակտը ենթակա չէ վերացման:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն, քննարկելով վարչական ակտի վերաբերյալ բերված վարչական բողոքը՝ վարչական մարմինը, որն ընդունել է բողոքարկվող վարչական ակտը, իրավասու է՝

բ) մերժելու բողոքը՝ վարչական ակտը թողնելով անփոփոխ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 54-րդ հոդվածով և հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը, 76-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. Մերժել «ՎԻ ԷՄ ՏԵԼԵՊՐՈՋԵՔԹ» ՍՊ ընկերության վարչական բողոքը՝ անփոփոխ թողնելով Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2024 թվականի փետրվարի 19-ի թիվ 19-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակցին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ**

22 մարտի 2024թ.
ք. Երևան